

2007 թ.-ի III-եռամսյակում ՀՀ-ում գործող բանկերի գործունեության համառոտ վերլուծությունը

ՀՀ բանկային համակարգում 2007 թ.-ի III-եռամսյակի ընթացքում հիմնական ցուցանիշների գծով տոկոսային արտահայտությամբ ամենաբարձր աճը գրանցվել է չբաշխված շահույթի գծով՝ 66.2 % կամ 6.7 մլրդ դրամ, իսկ ամենացածրը՝ արժեթղթերում ներդրումների գծով՝ 0.7 % կամ 672.7 մլն դրամ: Այսպես, III-եռամսյակի ընթացքում ընդհանուր ակտիվներն աճել են 12.7 %-ով կամ 77.2 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել մոտ 687.1 մլրդ դրամ: Ընթացիկ տարվա ինը ամիսների ընթացքում ընդհանուր ակտիվների աճը կազմել է 26.3 % կամ 142.9 մլրդ դրամ, ընդ որում նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում այն կազմել էր 10.0 % կամ մոտ 45.0 մլրդ դրամ (ակտիվների ծավալը 2006 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 496.1 մլրդ դրամ): Շարադրվածի միայն ավելացնենք, որ տարեկան (2006 թ.-ի հոկտեմբերի 1-ից 2007 թ.-ի սեպտեմբերի 30) կտրվածքով ընդհանուր ակտիվներն աճել են մոտ 38.5 %-ով կամ 191.0 մլրդ դրամով: Համակարգի կողմից ապահովված ընդհանուր ակտիվների վերոնշյալ աճերը հիմնականում իրենց արտացոլումն են գտել վարկային ներդրումներում:

Հաշվետու եռամսյակում վարկային ներդրումներն աճել են 20.0 %-ով կամ 61.5 մլրդ դրամով, իսկ ներդրումները արժեթղթերում՝ 0.7 %-ով կամ 672.7 մլն դրամով և եռամսյակի վերջում կազմել համապատասխանաբար 369.1 և 98.7 մլրդ դրամ: Անցած ինը ամիսների ընթացքում վարկային ներդրումների աճը կազմել է 45.1 % կամ 114.7 մլրդ դրամ, իսկ ներդրումների աճը արժեթղթերում՝ 9.1 % կամ 8.2 մլրդ դրամ, հարկ է նշել, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում վարկային ներդրումներն աճել են 9.3 %-ով կամ 19.5 մլրդ դրամով (վարկային ներդրումների ծավալը 2006 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 229.4 մլրդ դրամ), ներդրումները արժեթղթերում՝ 27.9 %-ով կամ 18.6 մլրդ դրամով: Միաժամանակ նշենք, որ տարեկան կտրվածքով վարկային ներդրումների աճը կազմել է 60.9 % կամ 139.7 մլրդ դրամ, ներդրումների աճը արժեթղթերում՝ 15.5 % կամ 13.3 մլրդ դրամ: 2007 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 53.7 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 51.1 %-ը կամ 188.5 մլրդ դրամ, և այս ցուցանիշը երրորդ եռամսյակում աճել է 21.4 %-ով կամ 33.2 մլրդ դրամով, իսկ ինը ամիսների կտրվածքով՝ 42.5 %-ով կամ 56.2 մլրդ դրամով, ընդ որում նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում այն աճել էր 7.8 %-ով կամ 9.1 մլրդ դրամով (տնտեսությանը տրված վարկերի ծավալը 2006 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 125.8 մլրդ դրամ): Միայն ավելացնենք, որ տարեկան կտրվածքով տնտեսությանը հատկացված վարկերի ծավալի աճը կազմել է 49.9 % կամ 62.8 մլրդ դրամ:

Երրորդ եռամսյակի ընթացքում 20.9 %-ի կամ 29.6 մլրդ դրամի աճ է գրանցվել ֆիզիկական անձանց տրված վարկերի ծավալի՝ եռամսյակի վերջում կազմելով 171.5 մլրդ դրամ, ընդ որում հաշվետու ինը ամիսների ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի ծավալը աճել է 67.8 %-ով կամ 69.3 մլրդ դրամով, տեղին է նշել, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում վերոնշյալ ցուցանիշը աճել էր 28.5 %-ով կամ 20.7 մլրդ դրամով (ֆիզիկական անձանց վարկերի ծավալը 2006 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 93.3 մլրդ դրամ), իսկ տարեկան կտրվածքով աճը կազմել է 83.9 % կամ 78.2 մլրդ դրամ: Հաշվետու եռամսյակում ֆիզիկական անձանց տրված վարկերի կառուցվածքում 18.0 %-ով կամ 16.4 մլրդ դրամով աճել են սպառողական վարկերը, իսկ 33.8 %-ով կամ 11.6 մլրդ դրամով՝ հիփոթեքային վարկերը՝ կազմելով համապատասխանաբար 107.5 և 46.0 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ արձանագրենք, որ անցած ինը ամիսների ընթացքում զգալի աճ է գրանցվել թե սպառողական վարկերի և թե հիփոթեքային վարկերի. սպառողական վարկերի աճը կազմել է 45.7 % կամ 33.7 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերինը՝ 96.1 % կամ 22.5 մլրդ դրամ: Համեմատության կարգով նշենք, որ նախորդ տարվա առաջին ինը ամիսների ընթացքում սպառողական վարկերն աճել էին 11.7 %-ով կամ 6.7 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերը՝ 83.4 %-ով կամ 9.2 մլրդ դրամով: Հարկ է նաև նշել, որ տարեկան կտրվածքով հիփոթեքային վարկերի ծավալը ավելացել է մոտ 1.3 անգամ կամ 25.8 մլրդ դրամով (հիփոթեքային վարկերի ծավալը 2006 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 20.2 մլրդ դրամ): Շարադրվածի հետ մեկտեղ հավելենք, որ երրորդ եռամսյակի վերջում սպառողական վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների ծավալի 29.1 %-ը, իսկ հիփոթեքային վարկերի ծավալը՝ 12.5 %-ը:

Հաշվետու եռամսյակի ընթացքում ընդհանուր ակտիվների ամենաբարձր տոկոսային աճ գրանցվել է «ԱրմՍվիսԲանկ»-ի մոտ՝ 67.56 %, որը դրամական արտահայտությամբ կազմել է մոտ 6.4 մլրդ դրամ, «Հայնեյրարտբանկ»-ի մոտ արձանագրվել է ակտիվների նվազում՝ 5.07 %-ի կամ 469.8 մլն դրամի չափով: Սակայն պետք է նշել, որ բացարձակ մեծությամբ ընդհանուր ակտիվների առավելագույն աճ ապահովվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ի կողմից և այն եռամսյակի ընթացքում կազմել է 9.5 մլրդ դրամ, երկրորդ ցուցանիշը ապահովել է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 9.3 մլրդ դրամ:


Տնտեսությանը վարկավորման ամենամեծ ծավալները ապահովել են՝ Արդշիննվեստբանկը՝ 28.4 մլրդ դրամ, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 23.1 մլրդ դրամ, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 22.6 մլրդ դրամ, «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ը՝ 15.7 մլրդ դրամ և «Կոնվերս Բանկ»-ը՝ մոտ 15.4 մլրդ դրամ, իսկ ֆիզիկական անձանց վարկավորման գծով առաջատար դիրքերում են գտնվում՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը, որը

ապահովել է՝ 23.2 մլրդ դրամ, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 21.3 մլրդ դրամ, «Արդշինհիմվեստբանկ»-ը՝ 20.7 մլրդ դրամ, «Յունիբանկ»-ը՝ 17.5 մլրդ դրամ և «Հայէկոնոմբանկ»-ը՝ 15.2 մլրդ դրամ: Համակարգում հիփոթեքային վարկերի գծով առաջին հնգյակում են՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 16.2 մլրդ դրամ, որը կազմել է համակարգի հիփոթեքային վարկային պորտֆելի 35.2 %-ը, «Յունիբանկ»-ը՝ 9.4 մլրդ դրամ (20.5 %-ը), ընդ որում երրորդ եռամսյակում «Յունիբանկ»-ը ապահովել է նաև հիփոթեքային վարկերի ծավալի ամենամեծ աճը, որը բացարձակ մեծությամբ կազմել է 3.4 մլրդ դրամ, «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ը՝ 3.0 մլրդ դրամ (6.57 %-ը), «Հայէկոնոմբանկ»-ը՝ 2.3 մլրդ դրամ (5.03 %-ը) և «Ինեկոբանկ»-ը՝ 2.1 մլրդ դրամ (4.47 %-ը):

Պետական գանձապետական պարտատոմսերում ՀՀ-ում գործող բանկերից առավելագույն ներդրումներն ունեն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 19.0 մլրդ դրամ և «Հայէկոնոմբանկ»-ը՝ 16.3 մլրդ դրամ:

ՀՀ գործող բանկերի 2007 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ ակտիվների և վարկային ներդրումների ծավալների վերաբերյալ տեղեկատվությունն արտացոլված է ստորև բերված գրաֆիկում:

ՀՀ-ում գործող բանկերի ակտիվները և վարկային ներդրումները
2007 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ



2007 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ-ում գործող բանկերի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 538.6 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 42.1 %-ով կամ 159.7 մլրդ դրամով (ընդհանուր պարտավորությունների ծավալը 2006 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 378.9 մլրդ դրամ): Վերոնշյալ ցուցանիշը ընթացիկ տարվա երրորդ եռամսյակում աճել է 14.6 %-ով կամ 68.7 մլրդ դրամով, ընդ որում անցած ինը ամիսների ընթացքում ընդհանուր պարտավորությունների աճը կազմել է 27.0% կամ 114.5 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի ցուցանիշը գերազանցել է մոտ 4 անգամ կամ 91.9 մլրդ դրամով: Ընդհանուր պարտավորությունների տարեկան կտրվածքով աճը պայմանավորված է նաև բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված ցպահանջ և ժամկետային ավանդների՝ 23.8 % կամ 13.1 մլրդ դրամ և 34.6 % կամ 25.5 մլրդ դրամ համապատասխան ավելացումներով, որոնք երրորդ եռամսյակի վերջում կազմել են համապատասխանաբար՝ 68.4 և 99.4 մլրդ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների 12.7 և 18.5 %-ը: Տեղին է նշել, որ հաշվետու եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց ավանդները (ցպահանջ և ժամկետային) ավելացել է 0.9 %-ով կամ 1.5 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 167.8 մլրդ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների 31.2 %-ը, ընդ որում ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները նվազել է մոտ 3.1 մլրդ դրամով կամ 3.1 %-ով, իսկ ցպահանջ ավանդները ավելացել 4.6 մլրդ դրամով կամ 7.2 %-ով: Նաև ավելացնենք, որ անցած ինը ամիսների ընթացքում ֆիզիկական անձանց ավանդները ավելացել է 16.2 %-ով կամ 23.4 մլրդ դրամով,


համեմատության համար փաստենք, որ անցած տարվա նույն ժամանակամիջոցում այն ավելացել էր 7.4 %-ով կամ 8.9 մլրդ դրամով, իսկ տարեկան կտրվածքով՝ 29.9 %-ով կամ 38.6 մլրդ դրամով:

Միաժամանակ արձանագրենք, որ եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց ավանդների (ցպահանջ և ժամկետային) առավելագույն ծավալ գրանցվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ի կողմից՝ 45.9 մլրդ դրամ, երկրորդ ցուցանիշը ապահովել է «Յունիբանկ»-ը՝ 24.5 մլրդ դրամ, իսկ երրորդը՝ «Արդշինինվեստբանկ»-ը՝ 19.9 մլրդ դրամով, ընդ որում ժամկետային ավանդների գծով ամենամեծ ծավալ ապահովել է «Յունիբանկ»-ը՝ 20.9 մլրդ դրամ, երկրորդ ցուցանիշը պատկանում է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ին՝ 19.1 մլրդ դրամ, իսկ երրորդը՝ «Արդշինինվեստբանկ»-ին՝ 15.7 մլրդ դրամ:

Երրորդ եռամսյակի կտրվածքով ցպահանջ պարտավորությունների ամենամեծ աճ գրանցվել է «ԱրմՍվիսԲանկ»-ի մոտ՝ 322.03 %, որը կազմում է 3.1 մլրդ դրամ, իսկ նվազում՝ «ԲՏԱ Ինվեստբանկ»-ի մոտ՝ 47.87 % կամ ցպահանջ պարտավորությունները նվազել է 471.4 մլն դրամով: Իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային դեպոզիտների ծավալով առաջատար բանկը «Արդշինինվեստբանկ»-ն է՝ 30.1 մլրդ դրամ, այնուհետև նրան հաջորդում են «Յունիբանկ»-ը՝ 24.5 մլրդ դրամ, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 22.3 մլրդ դրամ, «ՎՏԲ Հայաստան Բանկ»-ը՝ 11.1 մլրդ դրամ և «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 11.0 մլրդ դրամ: Եռամսյակային կտրվածքով վերոնշյալ ցուցանիշի ներգրավված լավագույն արդյունք ապահովել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը, որը բացարձակ մեծությամբ կազմում է 4.3 մլրդ դրամ:

ՀՀ գործող բանկերի 2007 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ պարտավորությունների և ֆիզ. անձանց ավանդների (ցպահանջ և ժամկետային) վերաբերյալ տեղեկատվությունը արտացոլված է ստորև բերված գրաֆիկում:

ՀՀ-ում գործող բանկերի պարտավորությունները և ֆիզ. անձանց ավանդները (ցպահանջ և ժամկետային) 2007 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ



ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 6.1 %-ով կամ 8.6 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 148.5 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է բանկերի կողմից կուտակված շահույթի, ինչպես նաև կանոնադրական հիմնադրամի ավելացման հաշվին: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը անցած ինը ամիսների ընթացքում աճել է 23.6 %-ով կամ մոտ 28.4 մլրդ դրամով, իսկ տարեկան կտրվածքով՝ 26.8 %-ով կամ մոտ 31.3 մլրդ դրամով, համեմատության կարգով նշենք, որ նախորդ տարվա առաջին ինը ամիսների ընթացքում ըդհանուր կապիտալի աճը կազմել էր 23.5 % կամ 22.3 մլրդ դրամ, որը ընթացիկ տարվա համանուն ցուցանիշին զիջում է 6.1 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի

բաղկացուցիչներից մեկը՝ կուտակված շահույթը, երրորդ եռամսյակի ընթացքում աճել է 5.1 %-ով կամ մոտ 1.8 մլրդ դրամով՝ եռամսյակի վերջում կազմելով մոտ 37.7 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 25.39 %-ը, ընդ որում, ընթացիկ տարվա ինը ամիսների ընթացքում կուտակված շահույթը ավելացել է 30.6 %-ով կամ 8.8 մլրդ դրամով, այն ինչ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում այն ավելացել էր 18.8 %-ով կամ 4.1 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական հիմնադրամը, հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 6.8 %-ով կամ 6.2 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 98.3 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 66.2 %-ը: Անցած ինը ամիսների ընթացքում կանոնադրական հիմնադրամը ավելացել է 22.8 %-ով կամ 18.2 մլրդ դրամով, որը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համանուն ցուցանիշին զիջել է 5.8 %-ով կամ 1.1 մլրդ դրամով:


Կուտակված շահույթի ցուցանիշով առաջատարը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Ֆայաստան»-ն է 6.92 մլրդ դրամ գումարով, բանկը 2007 թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում ապահովել է 7.6 %-ի աճ: Նրան անմիջապես հաջորդում են՝ «Կոնվերս Բանկ»-ը՝ 6.73 մլրդ դրամ (աճը 8.6 %) և «Ֆայելկոնոմբանկ»-ը՝ 5.22 մլրդ դրամ (աճը 11.3 %): Հաշվետու եռամսյակի կտրվածքով կուտակված շահույթի նշանակալից աճ ապահովել է «Կոնվերս Բանկ»-ը՝ 0.53 մլրդ դրամ:

Բանկերի թվում հաշվետու եռամսյակի ընթացքում կանոնադրական հիմնադրամի համալրման գծով նշանակալից աճ է ապահովել «Անելիք Բանկ»-ը՝ 633.34 %, բանկի կանոնադրական հիմնադրամը սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 4.8 մլրդ դրամ (աճը 4.15 մլրդ դրամ), նշված ցուցանիշի գծով և տոկոսային և բացարձակ մեծությամբ երկրորդ աճը ապահովել է «ԲՏԱ Ինվեստբանկ»-ը՝ 55.88 % կամ 1.9 մլրդ դրամ:

2007 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ, ըստ ընդհանուր կապիտալի մեծության, առաջին հնգյակը կազմել են՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 20.4 մլրդ դրամ, «Արդշինինվեստբանկ»-ը՝ 14.3 մլրդ դրամ, «Կոնվերս Բանկ»-ը՝ 10.7 մլրդ դրամ, «ՎՏԲ Ֆայաստան Բանկ»-ը՝ 10.0 մլրդ դրամ և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Ֆայաստան»-ը՝ 9.8 մլրդ դրամ: Երրորդ եռամսյակի ընթացքում տոկոսային արտահայտությամբ ամենաբարձր աճ է ապահովել «ԲՏԱ Ինվեստբանկ»-ը՝ 57.92 %, երկրորդ ցուցանիշը ապահովել է «Արդշինինվեստբանկ»-ը՝ 9.06 %, իսկ երրորդը՝ «Անելիք Բանկ»-ը՝ 8.71 %:

ՉԳ-ում գործող բանկերի ընդհանուր կապիտալը, կանոնադրական հիմնադրամը և կուտակված շահույթը/վնաս 2007 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ

Մլրդ դրամ



ՀՀ բանկային համակարգը հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովել է 6.7 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը նախորդ եռամսյակի համեմուն ցուցանիշը գերազանցել է 1.3 մլրդ դրամով կամ 31.5 %-ով, հարկ է նշել, որ առաջին ինը ամիսների ընթացքում ապահովվել է 16.8 մլրդ դրամի մաքուր շահույթ, համադրելու համար նաև փաստենք, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում նույնանուն ցուցանիշը գերազանցվել է 38.4 %-ով կամ 4.7 մլրդ դրամով: 2007 թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտներն աճել են 60.0 %-ով կամ 30.7 մլրդ դրամով, իսկ ծախսերը՝ 57.7 %-ով կամ 22.4 մլրդ դրամով, եռամսյակի վերջում կազմելով համապատասխանաբար 81.8 և 61.1 մլրդ դրամ, արդյունքում ապահովվել է 20.7 մլրդ դրամ հաշվեկշռային շահույթ, ընդ որում երրորդ եռամսյակում ապահովվել է 67.3 %-ի կամ 8.3 մլրդ դրամի հաշվեկշռային շահույթի աճ: Ընթացիկ տարվա առաջին ինը ամիսների ընթացքում ստացված եկամուտները և կատարված ծախսերը 34.2 %-ով կամ 20.9 մլրդ դրամով և 33.3 %-ով կամ 15.3 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա համադրելի ժամանակամիջոցի համապատասխան ցուցանիշները: Հարկավոր է նաև արձանագրել, որ վերոնշյալ համադրելի ժամանակամիջոցների համար այս տարվա հաշվեկշռային շահույթը 37.2 %-ով կամ 5.6 մլրդ դրամով ստացվել է ավելի: Ինն ամիսների ընթացքում ստացված ընդհանուր եկամուտների և կատարված ընդհանուր ծախսերի գծով առաջատարը «Արդշինինվեստբանկ»-ն է համապատասխանաբար՝ 15.8 և 12.1 մլրդ դրամ գումարներով, իսկ հաշվեկշռային շահույթի ամենամեծ ծավալը նույնպես ապահովել է «Արդշինինվեստբանկ»-ը՝ մոտ 3.7 մլրդ դրամ, երկրորդ տեղում է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 8.5, 5.6 և 2.9 մլրդ դրամ և երրորդ տեղում՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը համապատասխանաբար 7.6, 4.7 և 2.9 մլրդ դրամ: Ընդհանուր առմամբ բանկերը, բացի «Կասկադ Բանկ»-ից, 2007 թ.-ի երրորդ եռամսյակը ավարտել են շահույթով: Ինն ամիսների կտրվածքով ստացված մաքուր շահույթի ծավալով առաջին տեղում է «Արդշինինվեստբանկ»-ը՝ 3.0 մլրդ դրամ, այնուհետև՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 2.38 մլրդ դրամ, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ»-ը՝ 2.3 մլրդ դրամ և «Հայէկոնոմբանկ»-ը՝ 1.44 մլրդ դրամ:

2007 թ.-ի առաջին ինն ամիսների արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 11.32 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 2.45 %: Վերը նշված առաջին ցուցանիշի (ROE) ամենաբարձր արդյունքը եռամսյակի ընթացքում ապահովել է «Զարգացման Հայկական Բանկ»-ը՝ 5.05 %, իսկ երկրորդ ցուցանիշինը (ROA)՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը՝ 24.29 %:

Վերլուծական նյութում արտացոլված ցուցանիշները պարունակում են նաև բանկերի դուստր կառուցվածքների տվյալները:

ՀՀ-ում գործող բանկերի հիմնական ցուցանիշների ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը 2006-2007 թթ.-ի երրորդ եռամսյակների վերջում արտացոլված է ստորև բերված գրաֆիկում:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները

